# ԲՅՈՒԼԵՏԵՆ

Նոյեմբեր 2025թ.

## ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

Նոյեմբերին գումարվել է Պալատի խորհրդի 2 նիստ՝ **04.11.2025թ.-ին և 18.11.2025թ.-ին:**

**04.11.2025թ.** նիստի օրակարգում ընդգրկված էր 3 հարց: Նիստի ընթացքում հաստատվել են Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, Պալատի ֆիզիկական անձ անդամի անդամակցությունը դադարեցնելու մասին որոշումները:

**18.11.2025թ.** նիստի օրակարգում ընդգրկված էր 4 հարց: Նիստի ընթացքում հաստատվել են Պալատի փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատի անդամ «Ջիփի Մենեջմենթ Ըդվայզերի» ՍՊԸ նկատմամբ ԿՊՄ կիրառելու, Պալատի անդամ «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ նկատմամբ ԿՊՄ չկիրառելու մասին որոշումները, ինչպես նաև Պալատի հանձնաժողովների 2026թ. գործունեության տարեկան ծրագրերը:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

### Որակավորման հանձնաժողով

Որակավորման հանձնաժողովը գումարել է 2 նիստ՝ **05.11.2025թ.-ին և 21.11.2025թ.-ին,** որոնցում փորձագետ հաշվապահի որակավորում է շնորհվել 6(վեց) անձի և հավանություն է տրվել որոշակի դասընթացներ ՇՄԶ ճանաչելուն:

### Անդամակցության հանձնաժողով

Հանձնաժողովը գումարել է 2 նիստ՝ **21.11.2025թ.-ին և 24.11.2025թ.-ին**, որոնցում որոշել է առաջարկել Պալատի խորհրդին՝ հաստատելու 2(երկու) ֆիզիկական անձանց՝ որպես աուդիտոր և փորձագետ հաշվապահ անդամ անդամակցությունը Պալատին:

### Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողով

Հանձնաժողովը գումարել է 1 (մեկ) նիստ՝ **04.11.2025թ.-ին,** որում քննարկել է «Պրոգրես Աուդիտ» ՓԲԸ նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելու հարցը:

## ՇՄԶ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

**10.11.2025թ.-ին** տեղի է ունեցել ՇՄԶ- «ԱՄՍ 320 – Էականությունը աուդիտի պլանավորման և իրականացման գործընթացում և ԱՄՍ 510 – Սկզբնական աուդիտի առաջադրանքներ – սկզբնական մնացորդներ» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Մարինա Ենգիբարյանը**




**13.11.2025թ.-ին** տեղի է ունեցել ՇՄԶ-«ՖՀՄՍ թարմացումներ, ներառյալ ՖՀՄՍ 18 — Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Դմիտրո Յուրգենիչը:**



**14.11.2025թ.**-ին տեղի է ունեցել ՇՄՋ-«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին օրենքում կատարված փոփոխությունները և լրացումները, հարց ու պատասխան» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Անուշ Միքայելյանը:**




**17.11.2025թ.**-ին տեղի է ունեցել ՇՄՋ-«ՀՀՄՍ 36 – Դրամաստեղծ միավորի գծով արժեզրկման հաշվառման առանձնահատկությունները» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ավետիք Մովսիսյանը:**




**20.11.2025թ.**-ին տեղի է ունեցել ՇՄՋ-«ESG – (Environmental, Social, and Governance) հաշվետվություններ՝ հաշվապահների և աուդիտորների համար նոր մարտահրավերները» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ֆլորա Գրիգորյանը:**




**24.11.2025թ.**-ին տեղի է ունեցել ՇՄՋ-«Ոչ ռեզիդենտի շահութահարկով հարկման դասընթացների շրջանակներում 2025թ.-ին ներկայացված ընթացակարգերի ամփոփում, հարցերի և խնդիրների քննարկում (ՀՀ հարկային օրենսգիրք, Կրկնակի հարկումը բացառող համաձայնագրեր)» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Հովհաննես Յանիկյանը:**



**28.11.2025թ.**-ին տեղի է ունեցել ՇՄՁ-«ԱՄՍ 570 – Կազմակերպության գործունեության անընդհատությունը (փոփոխված 2024թ.)» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Լիլիթ Մայիլյանը:**




## Համաշխարհային բանկի գիտաժողով. Վիեննա, 11-13 նոյեմբերի, 2025թ.

Սույն թվականի **նոյեմբերի 11-ից 13-ը** Վիեննայում (Ավստրիա) տեղի ունեցավ Համաշխարհային բանկի ֆինանսական և կայունության հաշվետվականության բարեփոխումների կենտրոնի կողմից կազմակերպված Կրթության և ֆինանսական հաշվետվականության մասնագետների համատեղ 12-րդ գիտաժողովը, որը նվիրված էր հանրային հատվածի ֆինանսական հաշվետվությունների համախմբմանը: Գիտաժողովին մասնակցում էին Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի նախագահ Մանվել Ղազարյանը, խորհրդի անդամ Հովհաննես Պետրոսյանը, գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը, Հանրային վերահսկողության խորհրդի նախագահի տեղակալ Կարեն Ալավերդյանը, ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՊՏՀ ներկայացուցիչները:







## Վարպետության դաս ՀՊՏՀ-ում

Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միջև կնքված համագործակցության հուշագրի ներքո ս.թ. նոյեմբերի 26-ին համալսարանը հյուրընկալեց Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի խորհրդի անդամ Հովհաննես Պետրոսյանին: Բանախոսը ՀՊՏՀ ֆինանսական հաշվառման ամբիոնի մագիստրատուրայի ուսանողների համար անցկացրեց վարպետության դաս՝ «Հայաստանի հանրապետության մասնավոր հատվածի հաշվապահական հաշվառման համակարգը» թեմայով: Հանդիպման ընթացքում մանրամասն ներկայացվեց և քննարկվեց հաշվառման համակարգը, մասնակիցները բարձրաձայնեցին իրենց հուզող հարցերը, որոնց վերաբերյալ ծավալվեց ակտիվ և արդյունավետ քննարկում:

